

**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ,
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Թիվ _____

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան

«___» «_____» 20__ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ մի կողմից, և _____ բանկը, գործելով համաձայն բանկի կանոնադրության, ի դեմս _____ գործադիր տնօրեն (վարչության նախագահ)՝ մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կնքեցին սույն գլխավոր համաձայնագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Համաձայնագրի առարկան

Սույն համաձայնագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով կանոնակարգվում են Կողմերի միջև կնքվող արտարժույթի առքի կամ վաճառքի, արժույթային սվոփի և արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման գործարքները:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

2.1 Սույն համաձայնագրում կիրառվող բառակազմում մեծատառով գրված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

- 2.1.1 Կենտրոնական բանկ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.
- 2.1.2 Բանկ՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ.
- 2.1.3 Բանկի կողմ՝** Կենտրոնական բանկի կողմից Բանկին տրամադրված նույնականացնող հնգանիշ կոդ.
- 2.1.4 Արտարժույթ՝** Օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամներն

ու մետաղադրամները, ինչպես նաև բանկային հաշիվներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով արտահայտված միջոցները.

2.1.5 Արտարժույթի առք՝ գործարք, որի դեպքում Բանկը պարտավորվում է Կատարման ամսաթվին Կենտրոնական բանկին վաճառել սույն համաձայնագրով նախատեսված անկանխիկ Արտարժույթ, իսկ Կենտրոնական բանկը պարտավորվում է Բանկին վաճառել համապատասխան ՀՀ դրամ ձեռք բերված Արտարժույթի դիմաց.

2.1.6 Արտարժույթի վաճառք՝ գործարք, որի դեպքում Կենտրոնական բանկը պարտավորվում է Կատարման ամսաթվին Բանկին վաճառել սույն համաձայնագրով նախատեսված անկանխիկ Արտարժույթ, իսկ Բանկը պարտավորվում է Կենտրոնական բանկին վաճառել համապատասխան ՀՀ դրամ ձեռք բերված Արտարժույթի դիմաց.

2.1.7 Արժույթային սվոփ՝ Արտարժույթի տրամադրման սվոփ կամ Արտարժույթի ներգրավման սվոփ.

2.1.8 Սվոփ տոկոսադրույք՝ Կենտրոնական բանկի կողմից Արժույթային սվոփ Գործարքի վերաբերյալ հայտարարությունում նշված սվոփ տոկոսադրույք.

2.1.9 Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումար՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված բանաձևով հաշվարկված դրամական միավոր, որը Սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում պարտավոր է վճարել ՀՀ դրամ ներգրավող կողմը (կատարման ամսաթվին) ՀՀ դրամ տրամադրող կողմին, իսկ Սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում՝ ՀՀ դրամ տրամադրող կողմը ՀՀ դրամ ներգրավող կողմին.

2.1.10 Արտարժույթի տրամադրման սվոփ՝ գործարք, որի դեպքում Կատարման ամսաթվին (առաջին քայլին) Բանկը Կենտրոնական բանկին տրամադրում է անկանխիկ արտարժույթ և Կենտրոնական բանկից ներգրավում ՀՀ դրամ, իսկ Մարման ամսաթվին (երկրորդ քայլին) նշված անկանխիկ միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում: Մարման ամսաթվին (երկրորդ քայլին) տեղի է ունենում նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումարի վճարում, որը Սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում վճարում է Բանկը Կենտրոնական բանկին, իսկ Սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում՝ Կենտրոնական բանկը Բանկին.

2.1.11 Արտարժույթի ներգրավման սվոփ՝ գործարք, որի դեպքում Կատարման ամսաթվին (առաջին քայլին) Բանկը Կենտրոնական բանկից ներգրավում է անկանխիկ արտարժույթ և Կենտրոնական բանկին տրամադրում ՀՀ դրամ, իսկ Մարման ամսաթվին (երկրորդ քայլին) նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում: Մարման ամսաթվին (երկրորդ քայլին) տեղի է ունենում նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումարի վճարում, որը Սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում վճարում է Կենտրոնական բանկը Բանկին, իսկ Սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում՝ Բանկը Կենտրոնական բանկին:

2.1.12 Արտարժույթի կանխիկացում՝ գործարք, որի դեպքում Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից անկանխիկ Արտարժույթի դիմաց կանխիկ Արտարժույթ է տրամադրվում Բանկին.

2.1.13 Արտարժույթի ապականխիկացում՝ գործարք, որի դեպքում Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից կանխիկ Արտարժույթի դիմաց անկանխիկ Արտարժույթ է տրամադրվում Բանկին.

2.1.14 Իրավասու հասցեներ՝ Սի Բի Էյ Նեթ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով գործարքների կնքման համար նախատեսված հայտերի ուղարկման և ստացման էլեկտրոնային հասցեներ.

2.1.15 Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Գործարք կնքելու առաջարկ (Հավելված 1-ին համապատասխան).

2.1.16 Իրավասու հայտ՝ այն Հայտը, որը ընդունվել և չի մերժվել Կենտրոնական բանկի կողմից, մասնակցություն է ունենում Աճուրդի իրականացման գործընթացին.

2.1.17 Հայտի հաստատում (մասնակի հաստատում)՝ Բանկի կողմից ներկայացված Գործարք կնքելու առաջարկը Կենտրոնական բանկի կողմից բավարարելու (մասնակի բավարարելու)՝ սույն համաձայնագրով սահմանված գործընթաց: Բանկի կողմից սույն համաձայնագրի համաձայն առաքված ցանկացած Հայտ հանդիսանում է գործարքի կնքման օֆերտա, որը պարունակում է Բանկի կողմից ներկայացված ծավալի առավելագույն սահմանաքանակ: Ընդ որում, առաջարկվող ծավալ է համարվում տվյալ Հայտում նշված Առաջարկությունների գումարների հանրագումարի առավելագույն չափը, ինչպես նաև մինչև այդ առավելագույն չափը ընկած ցանկացած դրական գումար, որի առավելագույն գումարի բավարարումը համարվում է լրիվ, իսկ մինչև առավելագույն գումարը ընկած ցանկացած դրական գումարի բավարարումը համարվում է մասնակի բավարարում, ինչը (հայտի հաստատումը կամ բավարարումը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով համարվում է ակցեպտ (Հավելված 2-ին համապատասխան).

2.1.18 Հայտի մերժում՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից մերժելու մասին ծանուցում (Հավելված 3-ին համապատասխան).

2.1.19 Գործարք՝ Կենտրոնական բանկի և Բանկի միջև սույն համաձայնագրի շրջանակներում կնքված Արտարժույթի առքի կամ վաճառքի, Արտարժույթի տրամադրման կամ ներգրավման սվոփի, Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման գործարք.

2.1.20 Կնքման ամսաթիվ (օր)՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը հաստատում (մասնակի հաստատում) է Բանկի կողմից ներկայացված Հայտը.

2.1.21 Կատարման ամսաթիվ (օր)՝ այն Բանկային օրն է, երբ պետք է իրականացվի Գործարքով ամրագրված Գործարքի կատարման համար անհրաժեշտ դրամային և արտարժույթային գործառնությունները: Եթե Կատարման ամսաթիվը հանդիսանում է ոչ Բանկային օր, ապա Կատարման ամսաթիվ է համարվում այդ օրվան հաջորդող առաջին Բանկային օրը.

2.1.22 Մարման ամսաթիվ (օր)՝ այն Բանկային օրն է, երբ պետք է իրականացվի Արժութային սվոփ գործարքով ամրագրված Գործարքի մարման համար անհրաժեշտ դրամային և արտարժութային գործառնությունները: Եթե Մարման ամսաթիվը հանդիսանում է ոչ Բանկային օր, ապա Մարման ամսաթիվ է համարվում այդ օրվան հաջորդող առաջին Բանկային օրը:

2.1.23 Գործարքի ծավալ՝ Գործարքի հիմքում ընկած Արտարժույթի միավորների թիվը:

2.1.24 Գործարքի փոխարժեք՝ Գործարքի հիմքում ընկած միավոր արտարժույթի գինը արտահայտված ՀՀ դրամով:

2.1.25 Գործարքի դրամային համարժեք՝ դրամական միավոր, որը հավասար է Գործարքի ծավալի և Գործարքի փոխարժեքի արտադրյալին, իսկ Արտարժույթի կանխիկացման կամ Արտարժույթի ապականխիկացման դեպքում՝ Գործարքի ծավալի և կնքման ամսաթվի դրությամբ Հաշվարկային փոխարժեքի արտադրյալին:

2.1.26 Հաշվարկային փոխարժեք՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված և հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միավոր արտարժույթի միջին գինը արտահայտված ՀՀ դրամով:

2.1.27 Սահմանային փոխարժեք՝ Աճուրդի ամփոփման գործընթացում Կենտրոնական բանկի կողմից որոշվող Գործարքի փոխարժեքի առավելագույն չափ, որը Արտարժույթի վաճառքի դեպքում հանդիսանում է բավարարված առաջարկությունների նվազագույն փոխարժեքը, իսկ Արտարժույթի առքի դեպքում՝ բավարարված առաջարկությունների առավելագույն փոխարժեքը:

2.1.28 Միջնորդավճար՝ Արտարժույթի կանխիկացման կամ Արտարժույթի ապականխիկացման գործարքների համար Կողմերի միջև համաձայնեցված տոկոսադրույք:

2.1.29 Միջնորդավճարին համապատասխան դրամային գումար՝ դրամական միավոր, որը հավասար է Գործարքի դրամային համարժեքի և Միջնորդավճարի արտադրյալին:

2.1.30 Բանկի դրամային թղթակցային հաշիվ Կենտրոնական բանկում՝ Բանկի անունով Կենտրոնական բանկում բացված և վարվող ՀՀ դրամով թղթակցային հաշիվ:

2.1.31 Բանկի արտարժութային հաշիվ՝ Բանկի անունով Կենտրոնական բանկում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում արտարժույթով հաշվառվող բանկային հաշիվ:

2.1.32 Կենտրոնական բանկի արտարժութային հաշիվ՝ Կենտրոնական բանկի անունով ֆինանսական կազմակերպությունում արտարժույթով հաշվառվող բանկային հաշիվ:

2.1.33 Բանկային օր՝ օրացուցային շաբաթվա այն օրը, երբ Կենտրոնական բանկը իրականացնում է իր հաճախորդների բանկային սպասարկումը:

2.1.34 Գործառնական օր՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկումը:

2.1.35 Աճուրդ՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ Բանկերը ներկայացնում են Հայտեր.

2.1.36 Աճուրդի հայտարարման ամսաթիվ (օր)՝ Կենտրոնական բանկի կողմից աճուրդի անցկացման վերաբերյալ հայտարարության հրապարակման օր.

2.1.37 Աճուրդի օր՝ Աճուրդի կազմակերպման օրն է.

2.1.38 Աճուրդի իրականացում՝ Բանկերի կողմից ուղարկված Հայտերի ամփոփում, արդյունքների հաստատում և արդյունքների մասին տեղեկացում.

2.1.39 Գործարքի կատարում (մարում)՝ կնքված Գործարքի Կողմերի կողմից այդ գործարքով ստանձնած իրենց փոխադարձ պարտավորությունների կատարում.

2.1.40 Անակցեպտ գործողություն՝ արտարժույթային գործառնություն, որի ժամանակ Կենտրոնական բանկը անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, Գործարքի ծավալի չափով արտարժույթը գանձում է Կենտրոնական բանկում հաշվառվող Բանկի արտարժույթային հաշվից կամ մուտքագրում է Կենտրոնական բանկում հաշվառվող Բանկի արտարժույթային հաշվին.

2.1.41 Թվաբանական կլորացման կանոններ՝ կլորացման այն մեթոդը, որի դեպքում կլորացման ենթակա միավորը չի փոխվում, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 0-4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 5-9-ի:

2.2 Սույն համաձայնագրում կիրառվող այլ հասկացություններն ունեն Կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող և կարգավորող իրավական ակտով սահմանված նշանակությունները:

Սույն համաձայնագրի կարգավորման շրջանակում ընդգրկվող (կարգավորման առարկա հանդիսացող), սակայն չկարգավորված կամ չմանրամասնեցված, կամ ոչ լիարժեք կարգավորված հարաբերությունները կարգավորվում (մանրամասնեցվում կամ հստակեցվում) են Կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքները և դրանց կիրառման մեխանիզմները սահմանող և կարգավորող իրավական ակտով:

Հոդված 3. Գործարքների և հաշվարկների իրականացման կարգը

3.1 Գործարքները կարող են կնքվել հայտարարված Աճուրդի և/կամ երկկողմանի բանակցությունների միջոցով: Երկկողմանի բանակցությունների արդյունքում սահմանված Գործարքի պայմանները (այդ թվում՝ միջնորդավճարի չափը) նշվում են Հայտի մեջ:

3.2 Գործարքներ կնքելու նպատակով Հայտերի ներկայացումը, ընդունումը, մերժումը կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.

3.2.1 Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա Գործարք կնքելու Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկին: Երկկողմանի

բանակցություններով գործարքների կնքման հետ կապված Կենտրոնական բանկի հայտարարություն կարող է չտրվել:

3.2.2 Հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով հետևյալ կերպ.

3.2.2.1 Էլեկտրոնային եղանակով կնքվող Գործարքների համար Հայտերը ներկայացվում են Սի Բի Էյ Նեթ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով.

3.2.2.2 Էլեկտրոնային եղանակով ներկայացվող Հայտերը կողավորվում են սույն համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված ֆայլին համապատասխան Մայքրոսոֆթ Էքսել 2003 (կամ ավելի նոր) տարբերակով (այլ կերպ ներկայացված Հայտը չի ընդունվում): Ներկայացվող ֆայլի անվանման կոդն պետք է ունենա հետևյալ տիպային կառուցվածքը առանց բացատների.

Բանկի կոդը	գծիկ	տեսակ*	կետ	հապավում
15200	-	cur	.	xls

* Տեսակ դաշտում արժույթային սվոփ գործարքների դեպքում պետք է նշվի՝ **swp**.

3.2.2.3 Կողավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

3.2.3 Կենտրոնական բանկ Հայտի ներկայացման պահ է համարվում Սի Բի Էյ Նեթ միջբանկային համակարգչային ցանցի կողմից առաքումը հաստատող ժամը: Բանկը Աճուրդին Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի վերաբերյալ տրված հայտարարությունում նշված ժամանակահատվածում, իսկ երկկողմանի բանակցություններով գործարքի Հայտը ներկայացնում է համաձայն բանակցությունների՝ մինչև Հայտի ընդունման համար պայմանավորված ժամը:

3.2.4 Աճուրդի դեպքում նույն Բանկից մեկից ավելի Հայտ ստանալու դեպքում ընդունվում է վերջին ներկայացված Հայտը, իսկ նախորդ ներկայացված Հայտը(երը) ուժը կորցրած է(են) ճանաչվում:

3.2.5 Հայտում նշվում են համաձայնագրի համարը, Բանկի կոդը, բանկի անվանումը, Արտարժույթի ISO կոդը, Գործարքի տեսակը (պետք է նշվի Արտարժույթի առք կամ Արտարժույթի վաճառք, Արտարժույթի տրամադրման սվոփ կամ Արտարժույթի ներգրավման սվոփ, Արտարժույթի կանխիկացում կամ Արտարժույթի ապականխիկացում), Աճուրդի համարը (միայն աճուրդների իրականացման դեպքում), Կնքման ամսաթիվ, Կատարման ամսաթիվ, Մարման ամսաթիվ (միայն Արժույթային սվոփի դեպքում), Սվոփ տոկոսադրույք (միայն Արժույթային սվոփի դեպքում), Միջնորդավճար (միայն Արտարժույթի կանխիկացման կամ Արտարժույթի ապականխիկացման դեպքում),

Միջնորդավճար վճարող կողմ (միայն Արտարժույթի կանխիկացման կամ Արտարժույթի ապականխիկացման դեպքում), Գործարքի ծավալը(ները) և Փոխարժեքը(ները) (Փոխարժեքը Արժութային սվոփի դեպքում պարտադիր դաշտ չէ), ընդ որում՝ յուրաքանչյուր Փոխարժեքին պետք է համապատասխանի միայն մեկ Գործարքի ծավալ:

3.2.6 Աճուրդի յուրաքանչյուր Հայտում Բանկը կարող է առավելագույնը 10 (տասը) Առաջարկություն ներկայացնել, եթե Կենտրոնական բանկի Աճուրդի հայտարարությունում այլ չափ նշված չի, ընդ որում՝ երկու լրացված Առաջարկության տողերի միջև ամբողջությամբ դատարկ Առաջարկության տողեր չպետք է լինեն: Երկկողմանի գործարքի Հայտում Բանկը ներկայացնում է 1 (մեկ) Առաջարկություն:

3.2.7 Կենտրոնական բանկի կողմից ընդունված սույն համաձայնագրի պահանջներին չբավարարող և/կամ երկկողմանի բանակցություններով չսահմանված Հայտը(երը) մերժվում է(են) և չի (չեն) համարվում Իրավասու հայտեր, ինչի վերաբերյալ Կենտրոնական բանկը ծանուցում է Բանկին սույն համաձայնագրի Հավելված 3-ում սահմանված ձևի միջոցով:

3.2.8 Եթե Աճուրդի օրվա մինչև Հայտերի ընդունման համար սահմանված ժամը տեխնիկաձրագրային խնդիրների պատճառով հայտերի ստացումը և ընդունումը անհնարին է լինում, ապա աճուրդային գործընթացը դադարեցվում է և 1.5 ժամվա ընթացքում Բանկերին հայտարարվում է Աճուրդը հետաձգելու կամ չեղյալ համարելու և/կամ նոր Աճուրդ անցկացնելու վերաբերյալ որոշումը:

3.2.9 Հայտարարված Աճուրդը չեղյալ հայտարարելու դեպքում տվյալ Աճուրդին Բանկերի կողմից ներկայացված բոլոր Հայտերը համարվում են ուժը կորցրած:

3.2.10 Հայտարարված Աճուրդի չեղյալացման վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը կարող է հասանելի լինել Կենտրոնական բանկի տնային էջի միջոցով:

3.2.11 Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը կարող է հաստատել (մասնակի հաստատել) կամ մերժել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում: Կենտրոնական բանկը Արտարժույթի ապականխիկացման կամ կանխիկացման Հայտը Բանկի կողմից ներկայացնելու դեպքում կարող է հաստատել կամ մերժել Հայտի ընդունման պահից 3 ժամվա ընթացքում:

3.2.12 Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված հայտը կամ այն բավարարել մասնակիորեն (հայտի մասնակի հաստատում):

3.2.13 Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:

3.3 Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ կերպ.

3.3.1 Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:

3.3.2 Արտարժույթի առքի (Արտարժույթի վաճառքի) Աճուրդի դեպքում եթե Իրավասու հայտում նշված Փոխարժեքը մեծ (Արտարժույթի վաճառքի դեպքում՝ փոքր) է Սահմանային փոխարժեքից, ապա տվյալ Փոխարժեքով Առաջարկությունը համարվում է չբավարարված:

3.3.3 Կնքված յուրաքանչյուր Գործարք համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մաս:

3.3.4 Գործարքները կնքելիս Գործարքի դրամային համարժեքը, սվոի տոկոսադրույքին համապատասխան դրամային գումարը, միջնորդավճարը կլորացվում են 10 լումա ճշտությամբ համաձայն թվաբանական կլորացման կանոնների:

3.3.5 Գործարք կնքելիս յուրաքանչյուր Առաջարկության Փոխարժեքը մնում է անփոփոխ անգամ այն դեպքում, երբ Բանկի կողմից ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից բավարարվում է մասնակի, եթե Կենտրոնական բանկի հայտարարությամբ Բանկի համար ավելի բարենպաստ պայման չի առաջարկվում:

3.4 Սույն համաձայնագրի 3.3 կետի համաձայն կնքված Գործարքների կատարումները և մարումները իրականացվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.

3.4.1 Սույն համաձայնագրով նախատեսված ՀՀ դրամով գործառնությունները իրականացվում են բացառապես վճարման անկանխիկ ձևով, Կենտրոնական բանկի կողմից անվիճելի (անակցեպտ) կարգով, առանց լրացուցիչ հանձնարարականների ստացման, Բանկի դրամային թղթակցային հաշվին մուտքագրելու կամ ելքագրելու միջոցով:

3.4.2 Եթե Կենտրոնական բանկի հայտարարության մեջ արտարժույթային փոխանցումների վերաբերյալ նշումներ չկան կամ Կողմերը բանակցությունների միջոցով այլ պայմաններ չեն պայմանավորվել, ապա դրանք իրականացվում են Կենտրոնական բանկում հաշվառվող Բանկի արտարժույթային թղթակցային հաշիվների միջոցով: Առանձին դեպքերում արտարժույթային փոխանցումների տվյալների վերաբերյալ Կողմերը կարող են պայմանավորվել գործարքներ կնքելուց հետո:

3.4.3 Կնքված Գործարքները պետք է կատարվեն ամբողջությամբ՝ Գործարքի ծավալի չափով, այսինքն՝ մասնակի կատարում չի իրականացվում:

3.4.4 Արտարժույթի առքի, Արտարժույթի տրամադրման սվոփի, Արտարժույթի կանխիկացման դեպքում Գործարքի կատարման ամսաթվին, իսկ Արտարժույթի ներգրավման սվոփի դեպքում՝ Գործարքի մարման ամսաթվին, Բանկը պարտավոր է Կենտրոնական բանկի արտարժույթային հաշվին մուտքագրել Գործարքի ծավալի չափով Արտարժույթը, որից հետո (կամ միաժամանակ) նույն Բանկային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը Բանկի դրամային թղթակցային հաշվին պարտավոր է մուտքագրել Գործարքի դրամային համարժեքի չափով ՀՀ դրամը, իսկ Արտարժույթի կանխիկացման դեպքում՝ մինչև կատարման ամսաթվին հաջորդող Բանկային օրվա գործառնական օրվա ավարտը Կենտրոնական բանկի դրամարկղից Բանկին պարտավոր է տրամադրել Գործարքի ծավալի չափով կանխիկ Արտարժույթը:

3.4.5 Արտարժույթի վաճառքի, Արտարժույթի ներգրավման սվոփի, Արտարժույթի ապականխիկացման դեպքում Գործարքի կատարման ամսաթվին, իսկ Արտարժույթի տրամադրման սվոփի դեպքում՝ Գործարքի մարման ամսաթվին, Կենտրոնական բանկն Գործարքի դրամային համարժեքի չափով Բանկի դրամային թղթակցային հաշվից գանձում է ՀՀ դրամը, իսկ Արտարժույթի ապականխիկացման դեպքում՝ Գործարքի ծավալի չափով Բանկի կողմից կանխիկ Արտարժույթ է մուտքագրվում Կենտրոնական բանկի դրամարկղ, որից հետո (կամ միաժամանակ) նույն Բանկային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը պարտավոր է Բանկի արտարժույթային հաշվին մուտքագրել Գործարքի ծավալի չափով Արտարժույթը:

3.4.6 Անակցպետ գործողությամբ փաստացի կատարված գործառնությունները հանդիսանում են Բանկի կամ Կենտրոնական բանկի արտարժույթային հաշվին մուտքագրումներ կամ ելքագրումներ:

3.4.7 Կատարման ամսաթվին 3.4.4-3.4.5 կետերով նախատեսված համապատասխան գործողությունները իրականացնելուց հետո Կենտրոնական բանկն ելքագրում կամ մուտքագրում է Միջնորդավճարին համապատասխան դրամային գումարը:

3.4.8 Մարման ամսաթվին Կենտրոնական բանկն ելքագրում կամ մուտքագրում է Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը:

Հոդված 4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 4.1 Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կնքվող Գործարքների գաղտնիությունը:
- 4.2 Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում և պայմաններով կատարել համապատասխան փոխանցումները և/կամ վճարումները:

- 4.3** Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Բանկի թղթակցային հաշիվներից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն համաձայնագրի Հոդված 5-ով նախատեսված տուժանքի գումարները:
- 4.4** Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Արտարժույթի կանխիկացման կամ Արտարժույթի ապականիսիկացման գործարքներ կնքելու համար Բանկից նախապես պահանջել տեղեկատվություն գործարքների վերաբերյալ, իսկ Բանկը պարտավոր է տրամադրել Կենտրոնական բանկի պահանջին համապատասխան արժանահավատ տեղեկատվություն:

Հոդված 5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1** Կատարման ամսաթվին, մինչև գործառնական օրվա ավարտը, Արտարժույթի առքի, Արտարժույթի տրամադրման սվոփի դեպքում Բանկի կողմից Գործարքի ծավալի չափով արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի արտարժույթային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:
- 5.2** Կատարման ամսաթվին, մինչև գործառնական օրվա ավարտը, Արտարժույթի վաճառքի, Արտարժույթի ներգրավման սվոփի դեպքում Գործարքի դրամային համարժեքի չափով դրամական միջոցներ Բանկի դրամային թղթակցային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:
- 5.3** Կատարման ամսաթվին, մինչև գործառնական օրվա ավարտը, Գործարքի ծավալի չափով Բանկի կողմից Արտարժույթի ապականիսիկացման դեպքում կանխիկ Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի դրամարկը չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում, իսկ Արտարժույթի կանխիկացման դեպքում՝ անկանխիկ Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի արտարժույթային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում, Բանկը վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:
- 5.4** Կատարման ամսաթվին մինչև գործառնական օրվա ավարտը Միջնորդավճարին համապատասխան դրամային գումարի չափով Բանկի դրամային թղթակցային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ Միջնորդավճարին համապատասխան դրամային գումարի չափի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:
- 5.5** Սույն համաձայնագրի 5.1-5.4 կետերով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Կատարման ամսաթվից հաշված առավելագույնը երկու Բանկային օր, որից հետո Բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

- 5.6** Սույն համաձայնագրի 5.1-5.4 կետերով նախատեսված տուժանքները գանձելիս Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով, մինչև գանձման ենթակա տուժանքների ամբողջական մարումը:
- 5.7** Մարման ամսաթվին մինչև գործառնական օրվա ավարտը Արտարժույթի ներգրավման սվոփի դեպքում Բանկի կողմից Գործարքի ծավալի չափով արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի արտարժույթային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 1 (մեկ) տոկոսի չափով:
- 5.8** Մարման ամսաթվին մինչև գործառնական օրվա ավարտը Արտարժույթի տրամադրման սվոփի դեպքում Բանկի կողմից Գործարքի դրամային համարժեքի չափով դրամական միջոցներ Բանկի դրամային թղթակցային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 1 (մեկ) տոկոսի չափով:
- 5.9** Եթե Բանկը հանդիսանում է Սվոփ տոկոսադրույք վճարող կողմ, ապա Մարման ամսաթվին մինչև գործառնական օրվա ավարտը Արժույթային սվոփի դեպքում Բանկի կողմից Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումարի չափով Բանկի դրամային թղթակցային հաշվին դրամական միջոցներ չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 1 (մեկ) տոկոսի չափով:
- 5.10** Սույն համաձայնագրի 5.7-5.9 կետերով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Մարման ամսաթվից հաշված առավելագույնը երկու Բանկային օր:
- 5.11** Սույն համաձայնագրի 5.7.-5.9. կետերում նախատեսված դեպքերում Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները, ինչպես նաև տուժանքը դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով, մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը:

Հոդված 6. Վեճերի լուծման կարգը

- 6.1** Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Բանկային օրվա ընթացքում:
- 6.2** Կողմերի միջև առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Համաձայնագրի գործողության ժամկետը

- 7.1** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:
- 7.2** Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից տվյալ Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքներ կնքելու իրավունքից:
- 7.3** Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 7.2 կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվել:
- 7.4** Ցանկացած Կողմ կարող է սույն համաձայնագրից հրաժարվել՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:
- 7.5** Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի մյուս Կողմին տեղեկացնել իրավաբանական, փոստային, իրավասու էլեկտրոնային հասցեների, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի և այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

Հոդված 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

- 8.1** Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե այն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք է:
- 8.2** Հոդված 8-ի 8.1 կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն համաձայնագրի դրույթները խախտող Կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 9. Այլ դրույթներ

- 9.1** Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է երկու օրինակից (յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ): Երկու օրինակներն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրին կցվող հավելվածները կազմում են նրա բաղկացուցիչ մասը:
- 9.2** Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված են Կողմերի կողմից:

9.3 Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելու օրվանից՝ առանց սույն համաձայնագրի 9.2 կետով նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

9.4 Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Կողմերի միջև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2005 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1/936Լ որոշումով ձևով կնքված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի, արժույթային սվոփ, արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման գլխավոր համաձայնագիրը» համարվում է լուծված:

Հոդված 10. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	Բանկի անվանում																																													
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Վ.Սարգսյանի փ., 6	Հայաստանի Հանրապետություն, , ք.Երևան, փ.,																																													
Հեռախոս՝	Հեռախոս՝																																													
Ֆաքս՝	Ֆաքս՝																																													
	Թղթակցային հաշիվներ Կենտրոնական բանկում՝ <table border="1" data-bbox="673 1390 1550 1516"> <tr> <td data-bbox="673 1390 860 1432">ՀՀ դրամ</td> <td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td> </tr> <tr> <td data-bbox="673 1432 860 1474">ԱՄՆ դոլար</td> <td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td> </tr> <tr> <td data-bbox="673 1474 860 1516">ԵՎՐՈ</td> <td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td> </tr> </table>	ՀՀ դրամ															ԱՄՆ դոլար															ԵՎՐՈ														
ՀՀ դրամ																																														
ԱՄՆ դոլար																																														
ԵՎՐՈ																																														
Իրավասու էլեկտրոնային հասցե (Սի Բի Էյ Նեթ)՝ 1.	Իրավասու էլեկտրոնային հասցե (Սի Բի Էյ Նեթ)՝ 1. 2. 3.																																													

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝
«___» «_____» 20___ թ.	«___» «_____» 20___ թ.

Հավելված 1

ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏ

Հայտի N	
Համաձայնագրի N	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Արտարժույթի ISO կոդ	
Գործարքի տեսակ	
Աճուրդի համար	
Կնքման ամսաթիվ (օր)	
Կատարման ամսաթիվ (1-ին քայլ)	
Մարման ամսաթիվ (2-րդ քայլ)	
Սվոփ տոկոսադրույք	
Միջնորդավճար	
Միջնորդավճար վճարող կողմ	
Այլ նշումներ	

Առաջարկություններ			
N	Գործարքի ծավալ	Փոխարժեք	Գործարքի դրամային համարժեք
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			

Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝	

Հավելված 2

ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Հայտի N	
Համաձայնագրի N	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Արտարժույթի ISO կոդ	
Գործարքի տեսակ	
Կնքման ամսաթիվ (օր)	
Հայտի ընդունման ամսաթիվ	
Հայտի ընդունման ժամ	
Արտարժույթը փոխանցել	

Առաջարկություններ			
N	Գործարքի բավարարված ծավալ	Փոխարժեք	Գործարքի դրամային համարժեք
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			

«Կենտրոնական բանկի նախագահ՝

Ա. Զավադյան	
-------------	--

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ,
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հավելված 3

ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Հայտի N	
Համաձայնագրի N	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Աճուրդի համար	
Կնքման ամսաթիվ (օր)	
Հայտի ընդունման ամսաթիվ	
Հայտի ընդունման ժամ	

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	
Ա. Զավադյան	